# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2018 թ. N 104 - Ն

ք. Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի N 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 209-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

(դրամ)

| Հ/Հ | Ծառատեսակների անվանումը | խտացված խորանարդ մետրերով | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ներքին շուկայի համար | | | Արտահանման համար | | |
| | | Խոշոր տրամագիծը 25սմ և ավելի | Միջին տրամագիծը 13սմ մինչև 25 սմ | Փոքր տրամագիծը մինչև 13 սմ | Խոշոր տրամագիծը 25սմ և ավելի | Միջին տրամագիծը 13սմ մինչև 25 սմ | Փոքր տրամագիծը մինչև 13 սմ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | Գործափայտ | | | | | | |
| 1) | Հաճարենի | 18000 | 15000 | 12000 | 22000 | 19000 | 16000 |
| 2) | Կաղնի, Հացենի, Լորենի | 30000 | 26000 | 22000 | 36000 | 32000 | 28000 |
| 3) | Բոխի | 7000 | 5000 | 3000 | 9000 | 7000 | 5000 |
| 2. | Վառելափայտ | | | | | | |
| 1) | Ինքնամթերում (թափուկից) | 240 | | | 6435 | | |
| 2) | Ինքնամթերում (արմատի վրա) | 2145 | | | 6435 | | |

:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 12/07
«15» 02 2018 թ.
(ստորագրություն)